ՆՈՐ-ԴԱՐ

№ 210 ՅԱՍՆՕՐՅԱՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 5 Դեկտեմբերի 1897 Ուրբաթ 5 Դեկտեմբերի ՅԱՍՆՕՐՅԱՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 210

Տարեկան 10 րուբլն, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը. Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով յայտարարութիւնների բառին 3 կ., երեկւամների համար կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը առաջիկայ 1898-ին կրհրատարակուի Թիֆլիսում նոյն ձեւրով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետեւ օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսւանը 6 րուբլի, Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. Թիֆլիսում՝ 1 ր.

ԵՒՐՈՊԱՑի և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 Ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑի բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում հրատարանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում հետեւեալ «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատները։

Խմբագրատունը գտնւում է Լորիս-Մելիքեան փողոցում պոստ-հետաքրտան մօտ։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանն այս հասցէով Тифлисъ въ редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ *կամ* Tifils (Caucase), rédaction de journal „Nor Dar“

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԱՆՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 14-ին, կըկսւանայ

ՊՈՐՏՀԱՆԳԷՍ ԲԱԶԱՐՈՎ

ՀԱՆՁԿԱՑԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Բազարի սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։ Մուտքը — 2 ր. 10 կ։ Բազարում եղած բոլոր առարկաների վրայ նշանակուած կըլինեն գները։ Նուիրատուութիւններն ընդունւում են ընկերութեան գրասենեակում և իշխ. Մ. Թումանեանցի մօտ։

(Խմբ.) 5—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Հայոց թատրոն Թիֆլիսում։
Գանձակի կեանքից։
Հայոց թատրոն Բագւում։
Թղթակցութիւններ.— Բալախանի։
Դատական. — Իշխան Արաշիձէի սպանութեան գործը։
Քաղաքական. —Թիւրքիա։ 2ին Դերմանական միջադէպը։ Աւստրիա-Ունգարիա։
Հեռագրներ։

Թեր և դէմ։
Բանասիրական. - Երկաթէ դիմակով մարդը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հարեքշաբթի, դեկտեմբերի 3-ին, Թիֆլիսի առևտրական բանկը Թիւրքահայ գաղթականներին բաժանելու համար, որպէս նպաստ, ուղարկել է Թիֆլիսի նահանգապետին 500 րուբլի

—

Վլադիկաւկազի քաղաքային խորհուրդը, «Նով. Օբզ.»-ի ասելով, որոշել է տարեկան 5,000 րուբլի մուցնել քաղաքի ծախքի նախահաշւում Վլադիկաւկազում հաստատուելիք պոլիտիխնիկումի համար, և Թիֆլիս է ուղարկել մի լիազօր, որ պոլիտիխնիկումի հաստատութիւնը Վլադիկաւկազում յաղողացնելու համար անձամբ պիտի խնդրամատոյց լինի Կովկասեան գլխաւոր վարչութեանը։

—

Ջաւադի նախկին գաւառապետ Ռաֆիբէկովը, որ ներկայումս քննութեան տակ է, «Նով. Օբ.»-ի ասելով, գտանւորուած է,

—

Մայրաքաղաքներում գաւառական բարեգործական ընկերութեանց օգտին երեկոյթներ և համերգներ սարքելը արգելուած է, որովհետև յիշեալ ընկերութիւնները իրենց նպաստը ստանալու են այն տեղերից և ժողովրդից, որոնց մէջ նրանք ունին իրենց գոյութիւնը և որտեղ գործում են։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը իր դեկտեմբերի 3-ի նիստում ի միջի այլոց որոշեց մի առանձին յանձնաժողով կազմել, որ զբաղուելու է քաղաքիս փողոցների անունները վերափոխելով։

—

Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնը, կամենալով օգնութեան ձեռք կարկառել Երևանի և Կարսի նահանգի բնակիչներին, առաջարկել էր յիշեալ տեղերի նահանգապետներին յայտնել իրեն այն պատճառները, որոնց շնորհիւ այդ նահանգներում հացի գինը բարձրացել է։ Այժմ, ինչպէս իմանում ենք «Կաւկազից», Կարսի նահանգապետը պատասխանել է, որ հացի գինը այնքան էլ չի բարձրացել իր նահանգի ամեն տեղերում, որ հունձը կարելի է միջակ համարել և որ եթէ գինը բարձրացել է, այդ միմիայն նրա համար, որ հիւսիսային Կովկասը այդ կողմերից հացի ահագին պահանջ է առնում։ Որքան մեզ յայտնի է, «Կաւկազի» յիշեալ հաղորդագրութիւնը չի կարող հիշատակելու լինել, որովհետև, ընդհակառակն, Երևանի և Կարսի նահանգներն են, որ հիւսիսային Կովկասից ահագին քանակութեամբ հաց են գնում և պահանջը գնալով աւելի քան սաստկանում է։

—

Բրիանսկից հանքային գործարանը Պետերբուրգից Թիֆլիս է ուղարկել մի հանքային ինժեներ, որ պիտի ծանօթանայ Կովկասում եղած պղնձէ և երկաթէ հանքերի հետ։ Ցիշեալ ընկերութիւնը մտադրութիւն ունի Կովկասում իր հանքաբանական գործարանի մի ճիւղ բանալ։

—

Թիֆլիսի նահանգում մսացու կենդանիների վրայ նկատուած ժանտախտը այնքան լայն ծաւալ է ստացած, որ, «Կաւկազի» ասելով, Ներքին գործերի մինիստրը անասնաբոյժներին իրեն նպաստ, նրանց ճանապարհորդութիւնների համար, յատկացրել է 1000 ր.։

—

Թիֆլիսի գեղագործներից մէկը, պ. Ա. Բ. Շիլինով, խնդրամատոյց է եղել որ հարկնէ Թոյլատրել իրեն գեղատուն բանալ Թիֆլիսի այն քաղաքամասերից մէկում, որ գեղատուն չկայ, այնինչ այդ բանի կարիքը շատ մեծ է։ Որպէսզի իր խնդիրը հաւանութիւն գտնի, պ. Շիլինովը իր մատուցած խնդրագրի մէջ յիշատացել է ձգի դեղերը մատակարարել Թիֆլիսի ուսումնարաններում սովորող չքաւոր աշակերտներին։

—

Նոյեմբերի 23-ին Մոսկուայում տեղի է ունեցել վրաց երեկոյթն, որին ներկայ է եղել այնքան մեծ բազմութիւն, որ չարժուելու տեղ անգամ չի եղել ժողովարանի դահլիճում։ Երեկոյթը լաւ տպաւորութիւն է թողել, մանաւանդ ասիական պարերը։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ պ. Ա. Բ. Եանգուլեանը, «Կաւկազի» ասելով, քաղաքային վարչութեան առաջարկելու է մի յայտագիր Թիֆլիսում գիւղատնտեսական բերքերի չուկայ հանելու համար։

—

Վերջին ժամանակներս Բագուից այնքան մեծ քանակութեամբ է նաւթ արտահանւում Անդրկովկասեան երկաթուղով, որ այդ երկաթուղու նաւթատար վագոնները չեն կարողանում բաւականացնել։

—

Երէկ, դեկտեմբերի 4-ին, Թիֆլիսում չատացուեց Ռուսիայի պոստը։

ՄԵՋ ԳՐՈՒՄ ԵՆ

ՈՒՐՄԻԱ.— Մօտ ժամանակներս 3 հոգի պարսիկ սրիկաներ գնացել էին Գեօզ-Թափէ գիւղն և այժմ մանելով այդ գիւղացի հայերի տները հարբել էին։ Օղու ազդեցութեան տակ նրանցից մէկի խելքին փչել էր քաղաքը գնալ, բայց ճանապարհին ցրտից մեռել էր։ Այդ արդէն բաւական էր, որ սրիկայ պարսիկները վրայ տային Գեօզ-Թափէ թալանելու այն։ Շահզադան իմանալով այդ, 30 ձիաւոր էր ուղարկել պարսիկներին խաղաղեցնելու, սակայն դրանցից երեք հոգի, փոխանակ խռովութիւնը խաղաղեցնելու, ձերբակալում են այդ գիւղացի միրզա Դաւուդին և բերելով նրան քաղաք, բանտ են նրա. տեցնում. բանում և բանտարկուեն նրա. մանապէս Սրբ Սարգիսի կառապան Դաւուդին էլ, որին էլ երեք օր բանտում են թողնում. Դրանից յետոյ մորթում են, իրենց չարիքի համաձայն, 15 ըրիստոնեայ և կարում են նմանապէս կառապան Դաւուդի վիզը։ Միրզա Դաւուդին արդարադատութիւնը ազատել է, սակայն վերջին հանգամանքս աւելի է գրգռել ֆանատիկոս պարսիկներին, որոնք նորանոր անկարգութիւններ են

Որպէս թէ եզուիտները, օգտուելով ֆրանսիական դեսպանի ազդեցութիւնից, երբ ամենայն ներելի և աններելի միջոցներ գործ գնելուց յետոյ Աւետիք պատրիարքին յաջողեցնում են թուրքաց կառավարութեան միջոցով աքսորել տալ, երկիւղ կրելով թէ, մի գուցէ նա նորից յաջողի դառնալ իր գահը, փախցնում են նրան և էջմիածին դիմակ հագցնելով, ուղարկում Ֆրանսիա։

Ի հարկէ, եզուիտներից անսպասելի չէր մի այդպիսի բան, սակայն խնդիրը հնարաւորութեան կամ անհնարինութեան մասին չէ, այլ ճշմարտութեան. իսկ ճշմարտութիւնը մինչև վերջին ժամանակներս թանձր քօղով ծածկուած էր, մինչ այն ատեանն, որ նոյն իսկ շատ խուզարկուներ յուսահատուած էին, թէ երբ և իցէ հնարաւոր կըլինի ճշմարտութիւնը երևան հանել։ Այսպէս օրինակ, հռչակաւոր պատմաբան Միշլէն ասում էր. «Երկաթէ մարդու պատմութիւնն, ըստ երեոյթին, միշտ պաղտնի պիտի մնայ». իսկ Մարտէնը գրում է. «Պատմութիւնն իրաւունք չունի իր որոշումը յայտնելու մի խնդրի վերաբերմամբ, որին, անկասկած, վիճակուած է հնութագրութիւնների կարգում մնալ»։

Եւ արդարև. այդ խնդիրը այնքան երկար և բազմակողմանի ուսումնասիրութիւնների առարկայ լինելուց և ընդարձակ գրականութեան նիւթ դառնալուց յետոյ, դարձեալ մութ և խորհրդաւոր էր մնում. «Հնդկաստանի ատաւածներից ոչ մէկն այնքան կերպարանափոխութեան չէ ենթարկուել, ինչպէս այդ խորհրդաւոր կալանաւորը», ասում է հեգնօրէն Գոլ դը Սէն Վիկտորը։

Որպէսզի ընթերցողները կարող լինին մի փոքր գաղափար կազմել այդ «կերպարանափոխութեան» մասին, այս տեղ համառօտակի մէջ կըբերենք հնութագրութիւններից մի քանիսը։

«Երկաթէ դիմակով» մարդու մասին առաջին անգամ խօսողը եղաւ տիկին դը Վիո-Մէզոնը, որ իւր «mémoires pour servir a l'histoire de Perse» գրուածքի մէջ (1745 թուին Պարիզ տպուած) յայտնում է, թէ դա հերցոգ Վերմանդուան է—Լուդովիկոս XIV-ի և օրիորդ դը Լա-Վալիէրի որդին։ Սակայն այդ խնդիրը դեռ առանձին հետաքրքրութեան նիւթ չէր ներկայացնում, մինչև որ հինգ տարի յետոյ հռչակաւոր Վոլտէրը նախ հեռաւոր ակնարկութեամբ և ի վերջոյ յայտնապէս «Questions sur l'rncyclopédie»-ի մէջ հաղորդեց, թէ «երկաթէ դիմակով» մարդը Լուդովիկոս XIV-ի մինիստր Փուկէն է, կամ եզուիտների դէմ մաքառող մի երիտասարդ է, կամ Մոլիէրն է, կամ յայտնի լրտես է, կամ կառավարութեան համար մի վտանգաւոր աղնուական, կամ զինուորական բարձր պաշտօնեայ, կամ Գ. Պոլսի հայոց Աւետիք պատրիարքը և այլ անվերջ ենթադրութիւններ, որոնք շարունակ յայտնւում էին իրար շատով էլ հերքուելու համար։

Սակայն վերջերս դարձեալ նոյն խնդրով զբաղուողներ եղան և, ինչպէս կարծւում արդէն խնդիրն ուղիղ լուծումն է ստացել։

Ֆրանսիացի պատմաբան Ֆունկ Բրենտանո «Revue hebdomadaire» հանդիսի մէջ հրատարակել է իր ուսումնասիրութեան հետևանքները։ Նա մանրամասն և ուշադիր քննութեան է ենթարկել բոլոր հնարաւոր աղբիւրները, որոնցից գլխաւորը պէտք է համարել «Բաստիլի գիրքը», որի մէջ մանրամասնօրէն արձանագրւում էին Բաստիլ մտնող և այնտեղից արձակուող կալանաւորները։

Այդ գրքի մէջ 1698 թուին ի միջի այլոց կայ նաև մի այսպիսի արձանագրութիւն. «Հինգշաբթի սեպտեմբերի 18-ին, երեկոյեան ժամը 3-ին, Ս. Մարգարիտի կղզուց գալով առաջին անգամ տեղս ժամանեց Բաստիլի կառավարիչ պ. դը Սէն Մարսը իր հետ բերելով նաև մի վաղուցուայ կալանաւոր, որը նրա հետ եղել է Պինէէրոլում, չարունակ դիմակ է կրում և որի անունը չի

դը Լուդովիկոս XIV-ի հարազատ եղբայրն է, Աննա Աւստրիացու և Մազարինի որդին։ Սյնուհետև արդէն հետաքրքրութիւնն ընդհանուր եղաւ։

Հեղինակներից ոմանք ենթադրեցին, թէ դա իսկապէս Լուդովիկոս XIII-ի հարազատ որդին էր և գահի ժառանգը, մինչդեռ Լուդովիկոս XIV-ը միայն անհարազատ ծնունդ էր։ Այդ ենթադրութիւնն աւելի առաջ տանելով այնպիսի եզրակացութեան հանդուեր էլ եղան, թէ Լուդովիկոս XIII-ի որդին ուղարկուած լինելով Ս. Մարգարիտի կղզին յանձնւում է մի վստահելի մարդու խնամքի, ուր և մեծանալով, ամուսնանում է բանտապահի աղջկայ հետ. և որովհետև նրա ծագումը գաղտնի էին պահել, այլ միայն յայտնի էր որպէս աղնիւ ծնողների շառաւիղ, ուստի կոչւում էր de bonne part, իսկ իտալերէն de buone parte, որից և ծագել է Բուօնէպարտէ (Բոնապարտ) ազգանունը Նապոլէօն I-ի տոհմը։ Բացի այդ ամենից ենթադրողներ եղան, թէ «երկաթէ դիմահակով մարդը» Լուդովիկոս XIV-ի մինիստր Փուկէն է, կամ եզուիտների դէմ մաքառող մի երիտասարդ է, կամ Մոլիէրն է, կամ յայտնի լրտես է, կամ կառավարութեան համար մի վտանգաւոր աղնուական, կամ զինուո-

ՀԱՅՏՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ամսագիր Ազգագրական Ընկերության

Ա. Ա. Տեր-Ղևոնդյան. Ազգագրական ուսումնասիրություններ. Ա. Հայոց հին հարսանեկան ծեսերը. Թիֆլիս, 1897. Էջ 1—96. Գին 50 կոպ.

Ազգագրական ընկերության ամսագրի առաջին տետրակի մեջ տպագրված է Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնասիրությունը հայոց հին հարսանեկան ծեսերի մասին։ Հեղինակը ամենայն մանրամասնությամբ նկարագրում է հարսանիքի բոլոր ծեսերը, սկսած նշանդրեքից մինչև հարսանիքի վերջը։ Ամեն մի ծեսի նկարագրությունից հետո հեղինակը բերում է նրա վերաբերությամբ ժողովրդի մեջ տարածված հավատալիքները, սովորությունները, ասացվածքները, երգերը և այլն

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊՈԼԻՍԸ, 28 նոյեմբերի.—Հայտնի է դարձել, որ Ամերիկայի Միացեալ Նահանգների հիմնադրութեան 120-ամեակի առթիւ Ֆիլատելֆիայում տեղի ունեցող ցուցահանդէսում հայերը ևս ներկայացուցչուհի պիտի ունենան։ Ֆիլատելֆիայի հայ կանանց մի խումբ, որի անդամներից են տիկին Ալիս Կալէնտէրեան, տիկին Ռոզա Ռոզալինա, տիկին Ալիս Ռոզալինա, տիկին Ալիս Ռոզալինա եւ ուրիշներ, ցանկանում է ցուցահանդէսում ներկայացնել հայ կանանց ձեռագործ աշխատանքներ։ Ցուցահանդէսի կազմակերպիչները խնդրել են տիկին Ալիս Ռոզալինային, որ նա հայ կանանց ձեռագործ աշխատանքներ ուղարկի ցուցահանդէսին։ Տիկին Ռոզալինան ընդունել է այդ խնդրանքը եւ ուղարկել է ցուցահանդէսին հայ կանանց ձեռագործ աշխատանքներ։ Ցուցահանդէսի կազմակերպիչները շնորհակալական նամակ են գրել տիկին Ռոզալինային։

(Տե՛ս «Նոր-Դար» № 209.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ֆիլատելֆիայի 17—28 դարերի ընթացքում ապրած ականաւոր մարդկանց ցուցահանդէսում մեծ տեղ է յատկացուած նաեւ հայերին։

Ցուցահանդէսի կազմակերպիչները հայ կանանց խնդրել են ուղարկել հայ ականաւոր կանանց նկարներ, ինչպէս նաեւ հայ կանանց ձեռագործ աշխատանքներ

ВОКРУГЪ СВѢТА

14-й год. изданія

14-й год. изданія

ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ

Открыта подписка на 1898 г.

на еженедѣльный иллюстрированный журналъ

ВОКРУГЪ СВѢТА

50 ЖИВОПИСНЫХЪ ВЕРНА

ТОМОВЪ!

ДЕШЕВЫЯ ОБЪЯВЛЕНІЯ

ЗАНИМАЮТЪ ПРЕВОСХОДНО ПРИБЫЛЬ,ПРОЧНЫЯ, СУЩЕСТВУЮЩІЯ ВЪ ТЕЧЕНІЕ ПЯТИ ЛѢТЪ ГАЗЕТЫ

РАЗНЫХЪ ЗАНАХОВЪ, ПРИБЫЛЬ,ПРОЧНЫЯ,

ЦѢНА ГОДОВОЙ ПОДПИСКИ СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ

ВЪ ГОРОДѢ МОСКВѢ, С.-ПЕТЕРБУРГѢ, КОЛОМНѢ, ВЛАДИМІРѢ, ЯРОСЛАВЛѢ, НИЖНЕМЪ НОВГОРОДѢ, ТВЕРИ, ТУЛѢ, РЯЗАНИ, ТАМБОВѢ, ВОРОНЕЖѢ, ОРЛѢ, КУРСКѢ, ХАРЬКОВѢ, ПОЛТАВѢ, КІЕВѢ, ЧЕРНИГОВѢ, ЕКАТЕРИНОСЛАВѢ, ОДЕССѢ, ТИФЛИСѢ, ВАКУ, ТАШКЕНТѢ, ОРЕНБУРГѢ, ПЕРМИ, ТОБОЛЬСКѢ, ИРКУТСКѢ, ВЛАДИВОСТОКѢ, ХАБАРОВКѢ, ЯКУТСКѢ, ТОМСКѢ, ТЮМЕНИ, ЕКАТЕРИНБУРГѢ, ВЯТКѢ, ВОЛОГДѢ, АРХАНГЕЛЬСКѢ, ПЕТРОЗАВОДСКѢ, ВЫБОРГѢ, ГЕЛЬСИНГФОРСѢ, ГАПСАЛЬ, ГАНГЕ, ГАПАРАНДѢ, ТОРНЕО, ТРОНДГЕЙМѢ, ХРИСТІАНІИ, БЕРГЕНѢ, СТАВАНГЕРѢ, ХЕЛЬСИНГЕРѢ, ГОТЕНБУРГѢ, ГЕЛЬСИНГБОРГѢ, ЛУНДѢ, МАЛЬМЕ, КОПЕНГАГЕНѢ, ОДЕНСЕ, ВЕЙЛЬ, ФРЕДЕРИЦІИ, ВЕЙЛЬ, ФРЕДЕРИЦІИ, ВЕЙЛЬ, ФРЕДЕРИЦІИ